

ՀԱՅՐԵՆԻՔ – ՄՓՅՈՒՈՔ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐՄԱԼՅԱՆԸ ՀՀ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՆՎԻՐԱԲԵՐԵՑ ԱՅՆ ՏԱՐԱԾՔԸ, ՈՐՏԵՂ ԳՈՐԾՈՒՄ Է ՀՀ ՉԼԻՎԱԿՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆԸ



Արձանագրության ստորագրման արարողությանը ներկա էին ՀՀ ԱԳՆ Պետական արարողակարգի ծառայության պետ Լևոն Մինասյանը, Դոնի Ռոստովում ՀՀ գլխավոր հյուպատոս Վարդան Ասոյանը, Դոնի հայ երիտասարդական միության և Դոնի Նախիջևանի հայ համայնքի ներկայացուցիչները և այլք: Ստորագրման արարողու-



Հոկտեմբերի 27-29-ը աշխատանքային այցով Դոնի Ռոստովում էր գտնվում ՀՀ արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Վահագն Մելիքյանը:

Այցի շրջանակներում Վահագն Մելիքյանը և Դոնի Նախիջևանի հայ համայնքի նախագահ Հարություն Սուրմալյանը ստորագրեցին արձանագրություն, որի համաձայն Հարություն Սուրմալյանը Հայաստանի Հանրապետությանը անհատույց նվիրաբերեց այն տարածքը, որտեղ այժմ գործում է ՀՀ գլխավոր հյուպատոսությունը: Հարություն Սուրմալյանը նաև խոստացավ մի քանի տարվա ընթացքում կառուցել նոր շենք և այն նույնպես անհատույց փոխանցել Հայաստանի Հանրապետությանը:

Վահագն Մելիքյանը ՀՀ արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Ջոհրաբ Մնացականյանի հրամանով Հարություն Սուրմալյանին պարգևատրեց ՀՀ ԱԳՆ առաջին կարգի հուշանվերով:



թյունից հետո Վահագն Մելիքյանը հանդիպում ունեցավ Դոնի հայ երիտասարդների հետ, որի ընթացքում պատասխանեց ներկաների հարցերին: Հանդիպման ընթացքում քննարկվեցին նաև Դոնի Ռոստովի հայրենակիցների համար առաջնային նշանակություն ունեցող բազմաթիվ հարցեր:

ԴՈՆԻ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ 30-ԱՄՅԱԿԻՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ

Հայաստանի ազատագրությունը Ռուսաստանի օգնության հետ կապելու ակտիվ հետաքրքրությունների շրջանում 18-րդ դարում, ձևավորվեց ռուսահայ գաղութների մեծ մասը: Ռուսաստանը իր հարավային սահմանները ընդարձակելու և Անդրկովկասում ամրանալու նպատակով հովանավորում էր անդրկովկասյան ժողովուրդների ազատագրական ձգտումները: Նա լայն հնարավորություններ էր ստեղծում Ռուսաստանի հարավում օտարերկրացիների, հատկապես հայերի բնակության համար: Օգտվելով պետության այդ քաղաքականությունից բազմաթիվ հայեր գաղթեցին Ռուսական կայսրության սահմանները և հիմնեցին իրենց համայնքները:

Պետությունից, ստանալով մի շարք արտոնություններ հայկական գաղթօջախները ստվարացան և բարգավաճեցին:

ԴՐԻՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹ

Այստեղ նշանավոր էին հատկապես Թեոդոսիայի Հին Դրիմի (Մուրխասը), Եվպատորիայի, Դարասուբազարի և այլ գաղթօջախները:

Հայերը ստացել էին դավանանքի ազատություն, թույլատրվում էր հիմնել հայկական դատարան (ռատուշա): Հայերի ինքնավարությունը խորհրդանշող ռատուշայում ազգային սովորությունների հիման վրա գործավարությունը տարվելու էր հայերեն լեզվով:

Դրիմահայերը հիմնականում զբաղվում էին առևտրով, արհեստներով և գյուղատնտեսությամբ: Հայ վաճառականները կապված էին ռուսական և արևելքի շուկաների հետ: Նրանք իրենց գործունեությանը նպաստում էին թերակղզու առևտրատնտեսական կյանքի բարգավաճմանը:

Խոշոր առևտրականներից շատերն ունեին ընդարձակ կալվածքներ: Նրանցից էին Նալբանդովները, Մեֆերովները, Մակեդիարովները, Այվազովկիները և այլ գերդաստաններ: Նրանք զբաղվում էին այգեգործությամբ, ծխախոտագործությամբ, դաշտավարությամբ: Հոգևոր իշխանու-

թյունը հայ եկեղեցին, ևս տիրում էր ընդարձակ կալվածքների: Սուրբ Խաչվանքն ուներ ավելի քան 4000 դեյաստին տարածություն:

Դրիմահայերը մշակութային աշխույժ կյանք ունեցան: 1815թ. Դարասուբազարում, ապա Հին Դրիմում, Թեոդոսիայում, Եվպատորիայում բացվում են դպրոցներ: 1858թ. հիմնվում է Նախիջևանում և արևմտում: 20-րդ դարի սկզբներին Դրիմում կար 9 տարրական դպրոց 250 աշակերտով: 19-րդ դ. 60-70-ական թվականներին լույս տեսան «Մասյաց աղվվի», «Դաստիարակ» պարբերականները:

Դրիմահայերը մեր ժողովրդին տվեցին մշակութային այնպիսի մեծանուն գործիչներ, ինչպիսիք են ծովանկարիչ Հ. Այվազովկին, երգահան Ալ. Սպենդիարյանը և ուրիշներ:

ՄԱՏՐԱԿԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹ

Այստեղ հայկական գաղթօջախը ձևավորվում է 17-րդ դ. առաջին կեսին: Հայերի առևտրական գործունեությունը մեծ թափ է ստանում 18-րդ դարում: Մետաքսի ներմուծումը մնում էր որպես հումքի պահանջարկի բավարարման հիմնական միջոց: Տնտեսության այդ ճյուղում գլխավոր դեր էին կատարում հայերը: 18-րդ դ. վերջին Պարսկաստանից Աստրախանի վրայով ներմուծվող մետաքսի 70-80 տոկոսը գտնվում էր հայերի ձեռքին:

Այդ նույն ժամանակ հիմնվում է հայկական դատարանը կամ ռաթիաուրը: Դա հայերի ներքին ինքնավարության մարմինն էր: Դատավարությունը կատարվում էր ազգային իրավական նորմերի համաձայն: Հայկական դատարանին անհրաժեշտ էր ունենալ դատաստանագիրք: Տեղի հայ մտավորականները 1765թ. ստեղծեցին «Աստրախանի հայոց դատաստանագիրքը»: Այն կազմված էր Մխիթար Գոշի (13-րդ դար) դատաստանագրի, հայկական սովորության իրավունքի հիման վրա ռուսական օրենքերի հաշվառումով: Այդ դատաստանագիրքը գործածվում էր ինչպես Աստրախանում, այնպես էլ Դզվարի, Մոզդուկի, Նոր Նախիջևանի հայկական գաղութներում:

1840թ. դադարեցվեց հայկական դատարանի գործունեությունը, իսկ 1870թ. բարեփոխումների ժամանակ լիովին վերացվեց համայնքի ինքնավարությունը: Սակայն դրանից հետո հիմնվեցին ազգային բարեգործական հաստատություններ, որոնք ապահովում էին հայ համայնքի ինքնավար գոյությունը:

Աստրախանի հայ համայնքն ուներ իր ուրույն մշակութային կյանքը: 1810թ. վաճառական Նիկողայոս Աղաբաբյանը բացեց իր անունը կրող դպրոց, որը գործեց ավելի քան հարյուր տարի: Այստեղ 1816 թվականին հրատարակվեց ռուսահայ առաջին պարբերականը «Արևելյան ծանուցմունք» շաբաթաթերթը: 20-րդ դարի սկզբներին հրատարակվում էին մի քանի թերթեր:

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆ (ԴՈՆԻ ՌՈՍՏՈՎ)

Նշանավոր այս գաղութը հիմնադրվել է 1779թ. Դրիմից 12600 հայեր գաղթեցնելու միջոցով: Ռուսական կառավարությունը կազմակերպեց այդ գաղթը երկրի հարավային տափաստանները բնակեցնելու և տնտեսական կյանքը աշխուժացնելու համար: Գաղթեցված դրիմահայերը հանգրվան են գտնում Դոնի տափաստանում և Ա. Դմիտրի (հետագայում Դոնի Ռոստով քաղաք) ամրոցի մոտակայքում հիմնում Նոր Նախիջևան քաղաքը և 5 հայկական գյուղեր: Եկատերինա II կայսրուհու հատուկ հրովարտականով (1779թ. Նոյեմբերի 14-ին) դրիմահայերը մեծ արտոնություններ ստացան: Նրանք հիմնեցին մագիստրատ, որը զբաղվում էր գաղութի դատական, ոստիկանական և գործադիր իշխանության հարցերով: Այլ խոսքով, նույն դերն էր կատարում, ինչ որ ուրիշ գաղութներում ռաթիաուրը:

Դրիմի հայերը, օգտվելով տեղի նպաստավոր պայմաններից և պետության ընդունած հնարավորություններից, զարգացրեցին տնտեսության շատ ճյուղեր: Գյուղատնտեսության մեջ առաջատար էր հացահատիկային կուլտուրաների, մասնավորապես ցորենի մշակումը: Հա-



յերը հաջողությամբ զբաղվում էին նաև այգեգործությամբ և բանջարաբուծությամբ: Նրանք շերամապահության առաջին տարածողներն էին: Լայն տարածում գտած անասնապահությանը զբաղվում էին ինչպես գյուղերում, այնպես էլ քաղաքներում:

Նոր Նախիջևանը կարճ ժամանակում դառնում է Հարավային Ռուսաստանի բարեշնչ ու նշանավոր քաղաքներից մեկը:

Նոր Նախիջևանում զգալի հաջողության հասան արհեստագործությունը և արդյունաբերությունը: Արհեստավորներն այստեղ ևս ունեին իրենց համաքաղաքային կոդեքսը, որոնք շատ նման էին Անդրկովկասի հայ համաքաղաքայիններին:

Արդյունաբերությունից նշանավոր էին հատկապես ճարպահայ, բրդավագ, ծխախոտի, աղյուսի և այլ ձեռնարկությունները: Դոնի հայությունը հայտնի էր առևտրական մեծածավալ գործունեությամբ:

Նոր Նախիջևանի գաղութը կարևոր դեր կատարեց հայ մշակութային ավանդույթի պահպանելու և զարգացնելու ասպարեզում: Բազմաթիվ ծխական, իգական, 1880-ական թվականներին հիմնված ժառանգավորաց, արհեստավորական դպրոցների կողքին գործում էր թեմական ուսումնարան: Հրատարակվում էին բազում թերթեր, լայն տարածում էր գտել թատերական արվեստը: Դոնի հայության մշակութային կյանքում շատ էական էր իրենց հայրենակիցներ Մ. Նալբանդյանի և Ռ. Պատկանյանի դերը:

(Հարունակելի)